[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
8	Հուլիս	2019 թ.		Բ	2711568840
[4] Մատուցման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
8	Հուլիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	4	3	8	4	6		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	«ՊՈԼԻԳԼՈՏՆԵՐ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՄՊԸ)									
[11] Բանկային տվյալները	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ	N 1150003694504546								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԿԻԼԻՑԱՆ Փ. 11 83 տ.									
[13] Լրացուցիչ տվյալներ	Ծառայությունների մատուցման վայրը (հասցեն) ՀՀ ք. Երևան, Կիլյան փ. 11 83տ.									

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011002160								
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծանրությունը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թիվ 17103618 քրեական գործի թարգմանություն, ռուսերեն-հայերեն	էջ	322	2300		740600
2	Թիվ 61204416 քրեական գործի թարգմանություն, հայերեն-ռուսերեն	էջ	215	2300		494500
3	Թիվ 69107318 քրեական գործի թարգմանություն, ռուսերեն-հայերեն	էջ	533	2300		1225900
4	Թիվ 32100316 քրեական գործի թարգմանություն, ֆրանսերեն-հայերեն	էջ	12	4200		50400
Ընդամենը						2511400

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ OHANYAN INNA 54015570325

(ստորագրություն, անուն, ազգանուն)

08/07/2019 13:33:53 00143846

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

30 հունվարի 2019թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Յու.Ա.Բաղդասարյանս, քննարկելով վարույթիս թիվ 17103618 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

01.03.2018թ. Բելառուսի Հանրապետության քննչական կոմիտեում 26.11.2017թ. ԲՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված թիվ 17124250132 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի Գրիգոր Արշալույսի Բաբախանյանի, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունից ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական և նույն օրն քրեական գործն ընդունվել է վարույթ շնորհվել է 17103618 համարը:

Նախաքննության ընթացքում թիվ 17103618 քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտ՝ ռուսերենից հայերեն թարգմանության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ճանաչել Հասմիկ Աշոտի Մարգարյանին /ծնված 28.10.1994թ., հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, հաշվառված է ք.Ջերմուկ, Շահումյան փ. 4շ. 49բն., տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություններ գրավոր և բանավոր՝ հայրերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզուներով/ և վերջինիս բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:

2.Հասմիկ Աշոտի Մարգարյանին նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ **ՅՈՒԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Սույն որոշումն ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները:

ԹԱՐԳՄԱՆԻՉ՝ **Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգման ներգրավելու մասին

15 փետրվարի 2019թ. ք.Հրազդան

ՀՀ ՔԿ Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Դ.Վ.Թովմասյանս, քննարկելով վարույթը կարճված թիվ 61204416 քրեական գործի նյութերը և ՌԴ իրավասու մարմնից ստացված քննչական պահանջը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ից ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչություն տեղեկություններ են ստացվել այն մասին, որ ՌԴ ՆԳՆ Դոնի Ռոստով քաղաքի քննչական վարչությունում ՌԴ քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 3-րդ մասի / խարդախություն / հատկանիշներով հարուցված թիվ 2015468434 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ անհայտ անձը խաբեությամբ՝ չպարզված ժամանակահատվածում, բայց ոչ ուշ, քան 11.11.2014թ., տիրացել է քաղաքացի Ս.Բ.Ամիրխանովին պատկանող <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի, 0008H0197 ռուսական համարանիշի ավտոմեքենային, վերջինիս պատճառելով խոշոր չափի՝ 500.000 ՌԴ ռուբլու վնաս:

ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի կողմից կատարված ստուգումներով պարզվել է, որ <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենան գտնվում է ՀՀ-ում, հաշվառված է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի 20 շենքի 68 բնակարանի բնակիչ Արտյոմ Գասպարյանի անվամբ: Պարզվել է նաև, որ ավտոմեքենայի համարանիշն է 33 DD 333, այն պատված է սպիտակ թաղանթով և <<LUXCAR>> ընկերության կողմից տրամադրվում է վարձակալությամբ:

ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչությունում ձեռնարկված ՕՀ միջոցառումներով պարզվել է, որ Արտյոմ Գասպարյանը <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենան ՀՀ է ներկրել 2015թ. Մայիսի 15-ին ու մայիսի 25-ին կազմված հարկային հայտարարագրի հիման վրա հաշվառման է կանգնեցրել իր անվամբ ու ստացել 33 DD 333 հաշվառման համարանիշը:

Արտյոմ Գասպարյանի կողմից նշված ավտոմեքենան ՀՀ ներկրելու և հաշվառելու վերաբերյալ փաստաթղթերը, այդ թվում՝ ավտոմեքենայի ձեռքբերման վերաբերյալ կազմված 12.05.2015թ. առուվաճառքի պայմանագիրը ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ-ում ստացվելուց հետո, դրանք ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի միջոցով տրամադրվել են հետախուզումը նախաձեռնողին՝ ՌԴ-ում դրանց ձեռքբերման օրինականությունը ստուգելու, ինչպես նաև կատարված հանցագործությանը Արտյոմ Գասպարյանի հնարավոր առնչությունը պարզելու նպատակով: Ստացված պատասխանի համաձայն Ա.Գասպարյանը չի առնչվում ՌԴ-ում հարուցված ու քննվող թիվ 2015468434 քրեական գործին:

Ավելի ուշ՝ 2016թ. Հունիսի 6-ին ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ից ստացվել է նոր տեղեկություն այն մասին, որ ՌԴ ՆԳՆ Դոնի Ռոստով քաղաքի ՆԳԳՎ ոստիկանության 2-

որդ բաժնում հարուցված քրեական գործով հարցաքննվել է <<SL-Ավտո>> ՓԲԸ գլխավոր տնօրեն Դ.Դավիդովը, ով հայտնել է, որ Արտյոմ Գասպարյան անուն-ազգանունով անձնավորության չի ճանաչում, նրա հետ 12.05.2015թ. ամսաթվով <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիր չի կնքել, հիշյալ ավտոմեքենան ինչպես իր, այնպես էլ <<SL-Ավտո>> ՓԲԸ-ի կողմից չի շահագործվել ու վաճառվել:

Պայմանավորված այն հանգամանքով, որ մինչև հիշյալ դեպքով նյութեր նախապատրաստելն Արտյոմ Գասպարյանը մեկնել է ՀՀ-ից, ուստի հնարավոր չի եղել նրանից բացատրություն վերցնել:

2016 թվականի հունիսի 16-ին ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչության ավագ օպերլիազոր Վ.Նաջարյանի կողմից որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ նյութերի նախապատրաստման ընթացքում որևէ փաստական տվյալ ձեռք չի բերվել Արտյոմ Գասպարյանի կողմից ավտոմեքենան անօրինական ճանապարհով ձեռք բերելու կամ քրեորեն հետապնդելի այլ արարք կատարելու վերաբերյալ և նրա արարքում բացակայում է հանցակազմը:

2016 թվական հունիսի 28-ին ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Կ.Խաչատրյանի կողմից որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 61204416 քրեական գործը հարուցելու մասին, որն էլ նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե:

ՀՀ ՔԿ տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչությունից տարածքային ենթակայության կարգով 2016թ. հուլիսի 14-ին քրեական գործն ուղարկվել է Կոտայքի մարզային քննչական վարչություն և նույն օրը նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ, քրեական գործն ընդունել եմ վարույթ:

02.08.2016թ. քննչական պահանջ է ուղարկվել ՌԴ իրավասու մարմիններին՝ Դ.Դավիդովին հարցաքննելու և դրանից բխող այլ քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ:

02.09.2016թ. որոշում է կայացվել <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի, 33 DD 333 համարանիշի ավտոմեքենայի վրա կալանք դնելու մասին և այն ի պահ է հանձնվել Արտյոմ Գասպարյանին:

14.09.2016թ. որոշում է կայացվել Ա.Գասպարյանին ի պահ հանձնված ավտոմեքենան առգրավելու մասին, որն առգրավվել և պատասխանատու պահպանության է հանձնվել ոստիկանության Հրազդանի բաժնին:

Նկատի ունենալով, որ առերևույթ հանցագործության հանգամանքները հնարավոր է պարզել բացառապես ՌԴ-ից քննչական պահանջը ստանալուց հետո, որից հետո նոր միայն հնարավոր կլինի պարզել նաև որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձին, իսկ մինչ այդ կատարվել են բոլոր անհրաժեշտ և հնարավոր քննչական և օպերատիվ գործողությունները, որի արդյունքում դեռևս հնարավոր չի եղել պարզել որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձին, ուստի ՀՀ քր.դատ.օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով քրեական գործով վարույթը 2016թ. նոյեմբերի 16-ին կասեցվել է՝ մինչև որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձին պարզելը, կայացված որոշման օրինականությունը ստուգվել է նաև գլխավոր դատախազության կողմից:

2017թ. փետրվարի 6-ին ՌԴ իրավասու մարմնից ստացվել է քննչական պահանջի վերաբերյալ տեղեկատվություն, այն թարգմանվել է հայերեն լեզվով և դրա ուսումնասիրմամբ պարզվել է, որ <<SL-Ավտո>> ընկերության սեփականատեր և տնօրեն Դավիթ Դավիդովին հարցաքննել դեռևս չի հաջողվել, քանի որ վերջինը ընտանիքով գտնվել է Մոսկվայում, սակայն հարցաքննվել է ընկերության իրավաբան Նելլի Տարխանովան, ով էլ հայտնել է, որ իրականում 2015թ. մայիսի 12-ին իրենց ընկերություն է դիմել ՌԴ քաղաքացի Արսեն Համլետի Օհանջանյանը՝ իրեն պատկանող <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենան կոմիսիոն եղանակով վաճառքի հանելու խնդրանքով:

Իրենց ընկերությունն ավտոմեքենան, որի արժեքը շուկայականից բավական ցածր է եղել, հանել է վաճառքի և նույն օրը այն գնել է ՀՀ քաղաքացի Արտյոմ Մկրտիչի Գասպարյանը, սակայն վճարումը չի կատարվել ընկերության գանձապահի միջոցով, թեև տեղի է ունեցել դրամարկղում, այլ գնորդը վաճառողին վճարել է անձամբ և տվյալ դեպքում <<SL-Ավտոն>> ընկերությունը կատարել է միայն միջնորդի ծառայություն:

Այսինքն՝ Նելլի Տարխանովան փաստացի ընդունել է իրենց ընկերության միջոցով կոմիսիոն եղանակով ավտոմեքենան վաճառելու հանգամանքը, ինչը նախկինում անհասկանալի պատճառով ժխտել է տնօրեն Դ.Դավիդովը, ինչպես նաև ներկայացրել է Ա.Օհանջանյանի և <<SL-Ավտո>> ընկերության միջև կնքված պայմանագրերի պատճենները և կոմիսիոն վաճառքի նպատակով ավտոմեքենայի ընդունման-հանձնման ակտի պատճենը:

Նախաքննության ընթացքում արդեն իսկ հաստատվել է Արտյոմ Գասպարյանի հայտնած տեղեկատվությունը՝ ավտոմեքենան ձեռք բերելու հանգամանքների վերաբերյալ և գործով ձեռք չեն բերվել փաստական տվյալներ, որոնք կարող են վկայել, որ Ա.Գասպարյանը բարեխիղճ գնորդ չի հանդիսանում և տեղյակ է եղել, որ ավտոմեքենան հանցավոր ճանապարհով է ձեռք բերվել:

22.02.2017թ. Կոտայքի մարզային քննչական վարչություն է ներկայացել ՌԴ քաղաքացի Թիմուր Ամիրխանովը, ով ցուցմունքով հայտնել է, որ <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենան պատկանել է իրեն, այն իրենից խարդախությամբ հափշտակել է իր ծանոթ Բորիս Սկորոբոգատկոն, ով էլ հետագայում կեղծելով իր ստորագրությունը այն վաճառել է Արսեն Օհանջանյանին՝ վերջինս էլ իր հերթին վաճառել է <<SL-Ավտո>> ընկերության միջոցով ՀՀ քաղաքացի Արտյոմ Գասպարյանին: Ներկայացրել է ՌԴ-ում քրեական գործ հարուցելու, իրեն որպես տուժող ճանաչելու մասին որոշումների պատճեններ, ինչպես նաև դատարանի որոշում՝ համաձայն որի դատարանը բավարարել է իր հայցը և անվավեր ճանաչել իր անունից Օհանջանյանի հետ կնքված առուվաճառքի պայմանագիրը՝ պահանջելով ավտոմեքենան հանձնել իրեն:

Պետք է նշել նաև, որ թեև Թ.Ամիրխանովը 2014թ. դեկտեմբերին է դիմել ոստիկանություն և քրեական գործ է հարուցվել, սակայն ավտոմեքենան հետախուզման մեջ դեռ չի գտնվել 6 ամիս անց՝ 2015թ. մայիսին, երբ Ա.Գասպարյանը այն գնել է և տեղափոխել ՀՀ, հաշվառել իր անվամբ:

2017թ. մարտի 13-ին Կոտայքի մարզային քննչական վարչությունում ստացվել է քննչական պահանջի մնացած մասը՝ Դավիթ Դավիդովի հարցաքննության արձանագրությունը, որը թարգմանվել է հայերեն և պարզվել է, որ <<SL-Ավտո>> ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Դավիթ Խաթոնի Դավիդովը 14.02.2017թ. քննչական պահանջի շրջանակներում հարցաքննվել է տեղի իրավասու մարմինների կողմից որպես վկա և ցուցմունքով հայտնել, որ իրականում 2015թ. մայիսի 12-ին իրենց ընկերությանն է դիմել ՌԴ քաղաքացի Արսեն Համլետի Օհանջանյանը՝ խնդրելով վաճառքի հանել իրեն

սեփականության իրավունքով պատկանող <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենան, իրենց միջև կազմվել է կոմիսիոն վաճառքի նպատակով ավտոմեքենան ընկերությանը հանձնելու պայմանագիր և ընդունման-հանձնման ակտ: Նույն օրը նշված ավտոմեքենան ընկերությունից գնել է ՀՀ քաղաքացի Արտյոմ Մկրտիչի Գասպարյանը, ով գործարքը կատարել է ընկերության հետ, սակայն փաստացի վճարումը կատարել է հենց Ա.Օհանջանյանին՝ <<ՏԼ-Ավտո>> ՍՊ ընկերության դրամարկղով, նույն օրն էլ ավտոմեքենան Պյատիգորսկ քաղաքի ՃԵԱՊՏ ՄՀՔԲ-ում հաշվառվել է Արտյոմ Գասպարյանի անվամբ: Նշել է, որ իրենց ընկերությունն ավտոմեքենայի տեխնիկական վիճակի համար պատասխանատվություն չի կրում, շահագործված ավտոմեքենաների նույնականացման համարները չի ստուգում, այլ ընդամենը կատարում է միջնորդի ծառայություններ, իսկ գործարքի պահին՝ իր և Արտյոմ Գասպարյանի միջև առուվաճառքի պայմանագիրը կնքելուց՝ 12.05.2015թ. ավտոմեքենան հետախուզման մեջ գտնվելու վերաբերյալ տեղեկություններ չեն եղել: Ինչ վերաբերում է նախկինում իր կողմից ցուցմունքով ավտոմեքենայի վաճառքի փաստը ժխտելուն, ապա Դ.Դավիդովը պարզաբանել է, որ նախկին ցուցմունքի ժամանակ իրեն ներկայացվել է ուրիշ նույնականացման համարով նույն տարեթվի ավտոմեքենայի վերաբերյալ տվյալներ, որոնք իր ընկերության բազայում չի եղել, դրա համար էլ հերքել է վաճառքի փաստը, սակայն ներկայումս պնդել է, որ իրոք Ա.Օհանջանյանին պատկանող <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենան իր ընկերությունն է վաճառել Արտյոմ Գասպարյանին և իրոք իր և Ա.Գասպարյանի միջև կնքված պայմանագիրն օրինական է և որևէ կեղծիք չի կատարվել:

Այսպիսով՝ նախաքննության ընթացքում պարզվել և հիմնավորվել է, որ Արտյոմ Մկրտիչի Գասպարյանն իրոք, ինչպես ինքն է պնդել նախաքննության ընթացքում, <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենան ձեռք է բերել օրինական ճանապարհով և որևէ փաստաթուղթ չի կեղծվել կամ այդպիսի փաստաթուղթ չի օգտագործվել իր կողմից և նման պայմաններում կեղծ փաստաթուղթ օգտագործելու փաստով հարուցված քրեական գործով վարույթը ենթակա է կարճման՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Այսպիսով՝ նկատի ունենալով, որ կատարված լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում հիմնավորվել է, որ Արտյոմ Գասպարյանի կողմից <<Բենթլի Կոնտինենտալ Ֆլայինգ Սփյուռ>> մակնիշի, SCBBE53W95C030274 նույնականացման համարի ավտոմեքենան ձեռք է բերվել և ՀՀ-ում հաշվառվել օրինական կարգով, առուվաճառքի կեղծ պայմանագիր չի կնքել և կեղծ պայմանագիր չի օգտագործվել, այսինքն՝ բացակայում է հանցագործության դեպքը, ինչն էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համարվում է քրեական գործով վարույթը կարճելու հիմք:

Նշված հիմքով 25.04.2017թ. որոշում է կայացվել թիվ 61204416 քրեական գործով վարույթը կարճելու մասին, որի օրինականությունը ստուգվել է նաև ՀՀ գլխավոր դատախազության կողմից և գործն ուղարկվել է ՀՀ ՔԿ դեպարտամենտի արխիվ:

2018թ. ապրիլին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից ստացվել է թիվ 2015468434 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին հարցում, որի պահանջները հնարավորության սահմաններում կատարվել են և թիվ 61204416 քրեական գործի հետ միասին նյութերն ուղարկվել է ՀՀ ՔԿ դեպարտամենտի արտաքին կապերի բաժին՝ ռուսերեն լեզվով թարգմանելու և նախաձեռնողին ուղարկելու համար:

Նկատի ունենալով, որ գործի ծավալի մեծ լինելը, անհրաժեշտություն է առաջացել թարգմանությունն իրականացնելու համար որպես թարգմաններ ներգրավել Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին և Արմինե Վարուժանի Ալեքսանյանին, ովքեր ունեն համապատասխան թարգմանչի որակավորում և ազատորեն տիրապետում են հայերեն և ռուսերեն լեզուներին, ուստի վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր-ի 55-րդ հոդվածով, 83-րդ հոդվածով.

ՈՐՈՇԵՑԻ

1. ՌԴ իրավասու մարմնից թիվ 2015468434 քրեական գործով վարույթը կարճված թիվ 61204416 քրեական գործին առնչվող իրավական օգնություն ստանալու մասին հարցման կատարումն ապահովելու համար Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին և Արմինե Վարուժանի Ալեքսանյանին ներգրավել որպես թարգման՝ պարզաբանելով թարգմանի իրավունքներն ու պարտականությունները:
2. Որոշման օրինակն ուղարկել ՀՀ ՔԿ դեպարտամենտի արտաքին կապերի բաժին:

ՀԿԳ ավագ քննիչ՝ **Դ.Վ.Թովմասյան**

Թարգմաններ՝ **Գ.Շիրմազանյան**

Ա.Ալեքսանյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թիվ 69107318 քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

ք. Երևան **26 մարտի 2019թ.**

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ս.Գ.Թադիրյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 69107318 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեում ստացվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գրությունը՝ կից Բելառուսի Հանրապետության (այսուհետ՝ ԲՀ) գլխավոր դատախազությունից ստացված թիվ 17127090283 քրեական գործի օտարալեզու նյութերը՝ հարուցված ԲՀ քրեական օրենսգրքի 211-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ Տիգրան Ժիրայրի Անդրյանի վերաբերյալ:

2018թ. նոյեմբերի 03-ին քրեական գործը ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնում և ընդունվել վարույթ, որին շնորհվել է թիվ 69107318 համարը: Նույն օրը քրեական գործի նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտ՝ ռուսերենից՝ դրանց հաստատված հայերեն թարգմանությունն ապահովելու հանձնարարությամբ:

25.03.2019թ. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի արտաքին կապերի բաժնից ստացված թիվ 27/[91550]-19 գրության համաձայն՝ թիվ 69107318 քրեական գործով նյութերի թարգմանությունն ապահովվելու է «Պոլիգլոտներ» սահմանափակ պատասխանատվության ընկերության թարգմանիչ՝ Տաթևիկ Քոչարյանի (ծնված՝ 17.03.1980թ., ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AR 0516452, տրված 20.11.2017թ.) կողմից:

Նկատի ունենալով, որ թարգմանիչը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն իրականացնելու համար, իսկ սույն քրեական գործի նյութերի՝ ռուսերենից հայերեն թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ է ներգրավվել հիշյալ լեզուներն ազատորեն տիրապետող թարգմանիչ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ, 83-րդ հոդվածների և 101-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 69107318 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Պոլիգլոտներ» սահմանափակ պատասխանատվության ընկերության թարգմանիչ՝ Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին (ծնված՝ 17.03.1980թ., ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AR 0516452, տրված 20.11.2017թ.):
2. Թարգմանիչ Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա

իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչպես նաև առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀՀ քննչական կոմիտեի միջազգային հարցումների ապահովման բաժնի պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Ս.Գ.Թաիրյան

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներս և պարտականություններս պարզաբանված են, նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության, ինչպես նաև առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝ Տ.Գ.Քոչարյան

«16» մարտի 2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
թարգմանիչ մասնակից դարձնելու մասին

12 ապրիլի 2019թ. ք.Գորիս

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ս.Արզումանյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 32100316 քրեական գործի նյութերը,

պ ա ր զ ե ց ի՝

Գոռ Կարենի Խաչատրյանը 2016թ-ի հունվարի 17-ին՝ ժամը 01-ի սահմաններում, Գորիս քաղաքի Սյունիքի 179/28 հասցեի տանը համացանցի «odnoklassniki.ru» սոցիալական ցանցում իր «Г.К.» անվամբ գրանցված անձնական կայքէջով «skype» տեսակապի իր մուտքաբառն ստանալու և տեսակապով շփվելու հաղորդագրություն է ստացել «Катя я тебя хочу» անհայտ օգտատիրոջից: Տեսակապի «gor.xachatryan88» մուտքաբառն ուղարկելուց հետո՝ ժամը 01:27-ին, նրա հետ տեսակապի «olga210921» հասցեով հաղորդակցվել է սլավոնական արտաքինով, շիկահեր, բարետես աղջիկ, ում առաջարկով Գոռ Խաչատրյանը մերկացել է համակարգչի տեսախցիկի առջև, ինչը տեսագրվել է նրանից գաղտնի: Ըստ էության անց անհայտ անձը, Գոռ Խաչատրյանին ուղարկելով հիշյալ տեսագրությունը, այն վերջինիս «odnoklassniki.ru» կայքէջում գրանցված ընկերների անձնական էջերում հրապարակելու սպառնալիքով՝ նրանից պահանջել է մինչև հունվարի 17-ը՝ ժամը 20-ը, «+7-965-279-50-22 РОССИЙСКИЙ БИЛАЙН» կամ «С РОС КИВИ КОШЕЛЕК» համակարգով փոխանցել 94.350 ՀՀ դրամին համարժեք 15.000 ՌԴ ռուբլի՝ անզգուշությամբ պատճառելով ծանր հետևանք, մասնավորապես՝ Գոռ Խաչատրյանը, ստացված տեսագրության բովանդակությունից հայտնվելով հոգեճնշող վիճակում, վարկաբեկվելուց խուսափելու համար հունվարի 17-ին՝ ժամը 13-ի սահմաններում, ինքնասպանություն գործելու նպատակով տան լոգարանում ածելու սայրով կտրել է ձախ նախաբազկի ստորին երրորդականի առաջային մակերեսը, ստանալով առողջության միջին ծանրության վնաս, սակայն փրկվել է ընտանիքի անդամների կողմից ժամանակին օգնության հասնելու շնորհիվ:

Դեպքի առթիվ 2016թ-ի հունվարի 26-ին Գորիսի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 32100316 քրեական գործը և կատարվել նախաքննություն:

Քրեական գործով Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության իրավասու մարմիններից ստացվել են իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցման արդյունքում կազմված փաստաթղթերը՝ ֆրանսերեն լեզվով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով, 15-րդ, 83-րդ հոդվածներով, 188'-րդ հոդվածի 3-րդ մասով, 201-րդ հոդվածի 2-րդ մասով,

ո ր ո շ ե ց ի՝

1. Թիվ 32100316 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել և մասնակից դարձնել քրեական գործով չշահագրգռված անձ, «Պոլիգլոտներ» ՍՊ ընկերության կողմից լիազորված Աննա Միքայելյանին, ով ազատորեն տիրապետում է հայոց և ֆրանսերեն լեզուներին:

2. Թարգմանիչ Աննա Միքայելյանին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նախնական քննության տվյալներն առանց քննիչի թույլտվության չհրապարակելու պարտականության մասին:

ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչության
ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական **Ս.Արզումանյան**

Սույն որոշումը ինձ հայտարարվել է « » _____20 թ-ին, ինձ պարզաբանվեց ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչպես նաև՝ նախնական քննության տվյալներն առանց քննիչի թույլտվության չհրապարակելու՝ ՀՀ քրեական դատավարության օերենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված պարտականության մասին և քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝ ***Աննա Միքայելյան***

ՀԿԳ ավագ քննիչ՝ ***Սևակ Արզումանյան***